Հաշվետվություն

1. *Անունը, Ազգանունը*

   Դավիթ Սահակյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

   Ֆիլիպինների Հանրապետություն (Մանիլա)՝ 2017 թվականի դեկտեմբերի 11-ից 14-ը

4. *Հրավիրող կողմը*

   Ասիական զարգացման բանկ (ADB)

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

   Գործուղման նպատակն էր մասնակցել 7-րդ միջազգային հմտությունների ֆորումին՝ կազմակերպված Ասիական զարգացման բանկի կողմից:

6. *Քննարկված թեմաները*

   7-րդ միջազգային հմտությունների ֆորումի թեման էր՝ «Սպասելով և պատրաստվելով առաջացող հմտություններին ու աշխատատեղերին»: Միջոցառմանը մասնակցում էին ավելի քան 300 պատվիրակներ Ասիական զարգացման բանկի գրեթե բոլոր գործընկեր երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, Ղազախստանից, Ղրղստանից, Տաջիկստանից և Ուզբեկստանից: Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ընդգրկված է եղել նաև «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի կրթության ոլորտի բարեփոխումների թիմի համաղեկավար Միեր Սահակյանը:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Ֆորումը նախատեսված էր կրթության ոլորտի որոշումներ կայացնողների, քաղաքականություն մշակողների, մասնագետների և փորձագետների համար: «Սպասելով և պատրաստվելով առաջացող հմտություններին ու աշխատատեղերին» թեմայով ֆորումի հիմնական նպատակն էր խթանել գիտելիքների զարգացումը, փորձի փոխանակումը և նոր գաղափարների գեներացումը՝ չորրորդ արդյունաբերական հեղափոխությամբ պայմանավորված արագ փոփոխվող աշխարհում ավելի արդյունավետ և համապատասխան կրթական համակարգեր ձևավորելու համար: Ֆորումը անդրադարձել էր կրթության բոլոր մակարդակներին՝ հանրակրթությանը, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությանը: Քննարկումները կազմակերպված էին հետևյալ թեմատիկ խմբերով.

- Ինչպե՞ս պատրաստել աշխատուժ արագ փոխվող աշխարհում:
- Հանրակրթական դպրոցների արդյունավետ մոդել:
- Փոխակերպվող միջին մասնագիտական կրթություն: Միջազգային համագործակցում որակի ապահովման համար:
- Ի՞նչ է նշանակում ձևավորել համաշխարհային դասի համալսարան: Նորարարական մոդելներ:
- Նորարարական շուկա:
- Ջատագովելով ձեռնարկատիրությունը և առաջնորդության հմտությունները:
- Պանելային քննարկում ուղղված կրթության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման խնդիրներին:
- Հանրակրթությունում մեծ մասշտաբի բարեփոխումներ:
- Փոխակերպվող միջին մասնագիտական կրթություն:
- Բարձրագույն կրթության մեջ գործընկերության մոդելներ:
- Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները ակտիվացրեցին ուսուցումը և դասավանդումը հանրակրթությունում:

- Փոխակերպվող միջին մասնագիտական կրթություն: Ջատագովելով լավ աշխատանքը:
- Փոխակերպելով թվային ուսուցումը:
- Փոխակերպվող կրթական տեխնոլոգիաները:
- Տեխնոլոգիական հարթակը հմտությունների բացը կամրջելու համար:
- Տարբեր ոլորտների համագործակցությունը հմտությունների զարգացման համար:

8. *Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Ֆորումի թեմատիկ քննարկումներից բացի, միջոցառման ժամանակ կազմակերպվեց տարածաշրջանային (հետխորհրդային) երկրների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպում: Հանդիպման ժամանակ քննարկվեցին Ասիական զարգացման բանկի, ինչպես նաև ԱԶԲ գործընկերների կողից տարածաշրջանում իրականացվող և նախատեսվող ծրագրերը:

Հայաստանի պատվիրակությունը առանձնազրույց ունեցավ Ասիական զարգացման բանկի սոցիալական ուղղության տնօրեն տիկին Ռի Հիրաոկեի հետ: Հանդիպմանը ներկա էր ԱԶԲ Հայաստանյան գրասենյակի ղեկավարությունը: Քննարկվեցին ԱԶԲ Հայաստանում իրականացվող ծրագրերը, ընթացիկ հարցերը, պլաններն ու հեռանկարները:

9. *Գործուղվողը*

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյան

10. *Ստորագրությունը, ամսաթիվը*

19.12.2017